



«ՉԱՇԽԱՏՈՂ ՀԱՆՔԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆՆ ԱՃԹՆ ԳՈՐԾԸՆԹԱՅՈՒՄ» ԾՐԱԳԻՐ

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

«ԹԱԹՍԹՈՈՒՆ» ՍՊԸ, ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԼԻՃՔԻ ՊՂՆՁԻ ՀԱՆՔԱՎԱՅՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Սույն հաշվետվությունը պատրաստվել է «ԷկոԼուր» տեղեկատվական ՀԳ-ի կողմից իրականացվող «Չաշխատող հանքարդյունաբերական ընկերությունների պատասխանատվությունը ԱՃԹՆ գործընթացում» ծրագրի շրջանակներում: Ծրագիրն իրականացվում է ԱՄՆ ՄՋԳ-ի (USAID) աջակցությամբ «Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն» (ԹԻՀԿ) հասարակական կազմակերպության կողմից իրականացվող «Պահանջատեր հասարակություն՝ հանուն պատասխանատու կառավարման» ծրագրի շրջանակներում:

1. Ընդհանուր տեղեկատվություն հանքավայրի, Ընկերության և ազդակի համայնքների վերաբերյալ

ՀՀ Սյունիքի մարզի Լիճքի պղնձի հանքավայրի Լիճքի տեղամասի շահագործման ՇԱԹ-29/459 իրավունքը 11.02.2013 թվականից տրամադրված է «Թաթսթոուն» ՍՊԸ-ին: Կազմակերպության կողմից հողերը Լիճքից ձեռք են բերվել 2016 թվականի 2-րդ կիսամյակում:

Հանքավայրում իրականացվող լեռնակապիտալ (ըստ պայմանագրի այդ աշխատանքների համար տրված էր 2,5 տարի ժամանակ) աշխատանքները 2018 թվականի մայիսի 24-ից դադարեցվել են:

«Թաթսթոուն» ՍՊԸ –ի ընդերքօգտագործման պայմանագիրն է 11.02.2013թ. N Պ-459: 2015թ. ապրիլի 16-ին պայմանագրում կատարվել են փոփոխություններ՝ փոխվել են հատկացված հանքավայրի կոորդինատները: Իսկ 2016թ. փետրվարի 10-ին պայմանագրում կատարված փոփոխություններով օգտակար հանածոյի պաշարների մարվող նախկին 500,0 հազար տոննան կրկնապատկվել է, ինչպես նաև տիրապետման հանձնման համար սահմանված նախկին 18 տարին կրճատվել է դառնալով 12,5 տարի: 10.02.2016թ. փոփոխություններ են կատարվել նաև օգտակար հանածոների արդյունահանման նպատակով Ընկերության կողմից 2013թ. ներկայացված ֆինանսական առաջարկներում:

Հանքի շահագործման ժամկետը սահմանված է մինչև 11.08.2028թ-ը, մակերեսը՝ 26,1 հա, հանքաքարի հաստատված պաշարը՝ հանքաքար՝ 15359,9 հազ. տ, պղինձ՝ 45,2 հազ. տ (0,61%), տարեկան թույլատրելի արդյունահանվող պաշարը՝ 1268,0 հազ.տ:

Հանքավայրը գտնվում է «Արևիք» ազգային պարկի հարևանությամբ /ըստ ոչ պաշտոնական աղբյուրների՝ հանքավայրի մի մասը գտնվում է ազգային պարկի տարածքում/:

Այստեղ է գտնվում Մեղրի քաղաքի և հարակից բնակավայրերի խմելու ջրամատակարարման ջրաբաշխիչ սանիտարական գոտին:

10. 02.2016թ. N Լ- 459 լեռնահատկացման ակտով Ընկերությանը հատկացված է՝ 156,16 հա տարածք, որի 10 հա տարածքից հատվելու է 860 հատ ծառ: Նախատեսվել է համայնքի կողմից հատկացված տարածքում կատարել դրա ծավալի կրկնապատիկի չափով ծառատունկ՝ 2 տարվա խնամքի և պահպանության ժամկետով:

Ազդակի համայնքի մասին

Ազդակի համայնքն է Մեղրին /Լիճք, Լեհվազ, Տաշտուն բնակավայրեր

Գյուղ Լիճք

Ըստ Լիճք բնակավայրի վարչական ներկայացուցչի՝ 2020թ-ի վերջի տվյալներով Լիճքի բնակչության թիվը՝ 57:

Բնակավայրի զբաղեցրած տարածքը կազմում է 3934,47 հա: Լիճք գյուղում չի գործում նախադպրոցական ուսումնական հաստատություն:

Փակվել է «Լիճքի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ը աշակերտ չլինելու պատճառով:



Նկար 1. Լիճք բնակավայր

Լեհվազ բնակավայր

Ըստ Մեղրի խոշորացված համայնքի 2017-2021թթ. զարգացման ծրագրի՝ որպես Լեհվազ բնակավայրի բնակչության ընդհանուր թիվ նշված է 646: Ըստ Լեհվազի և Վարդանիձոր բնակավայրերի ներկայացուցչի՝ 2020թ-ի վերջի տվյալներով Լեհվազի բնակչության թիվը կազմել է 615, որից 304-ը՝ տղամարդ, 311-ը՝ կին: Գործում է «Մեղրի համայնքի մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի Լեհվազի մասնաճյուղը: Ունի 89 աշակերտով դպրոց: Զբաղեցրած տարածքը՝ 1007,77 հա:



Նկար 2. Լեհվազ բնակավայր

Հողեր (ընդամենը)՝ 3385 հա, այդ թվում՝ գյուղատնտեսական նշանակության հողեր՝ 1336 հա, որից՝ վարելահող՝ 77 հա, բազմամյա տնկարկ՝ 39 հա, խոտհարք՝ 12 հա, արոտ՝ 332 հա, այլ հողատեսք՝ 876 հա, որից բնակավայրերի հողեր՝ 57 հա, արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության հողեր՝ 4 հա, էներգետիկայի, տրանսպորտի, կապի և կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների հողեր՝ 17 հա, հատուկ պահպանվող տարածքների հողեր՝ 1934 հա, անտառային հողեր՝ 22 հա, որից անտառածածկ՝ 22 հա, ջրային հողեր՝ 14 հա:

Տաշտուն բնակավայր

Բնակչության թիվը՝ 108, որից 59 տղամարդ, 49 կին, 26 թոշակառու, 2 նպաստառու, գործում է « Տաշտունի հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ը՝ 2 աշակերտով: Գյուղի զբաղեցրած տարածքը կազմում է 2269,6 հա:

Բնակավայրերի բնակչությունը զբաղվում է պտղաբուծությամբ, անասնապահությամբ, բանջարաբուստանային կուլտուրաների և կարտոֆիլի մշակմամբ, մեղվաբուծությամբ:



Նկար 3. Լիճք բնակավայր

Բնակավայրերի խնդիրներն են՝ աղքատությունը, կախվածությունը արդյունաբերության որոշակի՝ հանքարդյունահանման ճյուղից, բնակչության արտագաղթը, օդի և ջրի, հողի աղտոտվածությունը, ժամանակակից ենթակառուցվածքների բացակայությունը, անբարեկարգ ճանապարհները և միջբնակավայրային տրանսպորտի բացակայությունը, տարածաշրջանում վտանգավոր արդյունաբերական ձեռնարկությունների և պոչամբարների առկայությունը:

Մեղրի համայնք

Մեղրի քաղաքի բնակչության ընդհանուր թիվը 2016 թվականի դեկտեմբերի 1-ի դրությամբ կազմել է 3380 մարդ (իգական՝ 2095, արական՝ 1285), նպաստառուների ընդհանուր թիվը՝ 135, որից ընտանեկան նպաստառուների թիվը՝ 77, գրանցված գործազուրկների թիվը՝ 142: Ունի 2 միջնակարգ դպրոց նախատեսված 1351 տեղի համար, ներկայումս այնտեղ հաճախում է 536 աշակերտ: Գործում է «Մեղրի համայնքի մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի կենտրոնական մասնաճյուղը, որտեղ հաճախում է 250 սան: Գործում է «Մեղրիի արվեստի մանկական դպրոց» ՀՈԱԿ-ը, որտեղ փաստացի հաճախում է 107 աշակերտ: Մեղրիում գործում է մեկ միջնակարգ մասնագիտական ԲՈԻՀ՝ Մեղրու պետական քոլեջը, որն ունի 177 ուսանող: Շենքը նախատեսված է 200 ուսանողի համար:



Նկար 4. Մեղրի քաղաքային համայնք

Առողջապահական միակ հիմնարկը՝ «Մեղրու տարածաշրջանային բժշկական կենտրոն» ՓԲԸ-ն է, ստեղծվել է 2010 թվականին «Ագարակի հիվանդանոց» ՓԲԸ-ի և «Մեղրու բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի միավորման արդյունքում: Կենտրոնը մատուցում է հիվանդանոցային, արտահիվանդանոցային և շտապօգնության ծառայություններ: Քաղաքում գործում են «Մեղրու պահածոների գործարան» ՓԲԸ-ն, որն արտադրում է մուրաբա, ջեմ, օշարակ, բնական հյութ, կոմպոտ և «Մեղրու գինու գործարան» ԲԲԸ-ն, որն արտադրում է խաղողի և նոսն գինի: Մեղրի համայնքի գյուղատնտեսության առաջատար ճյուղերն են պտղաբուծությունը և մեղվաբուծությունը: Առավելապես տարածված է մերձարևադարձային պտուղների՝ նոսն, թզի, արքայանարնջի, իսկ վերջին տարիներին նաև կիվիի և ձիթապտղի մշակությունը: Համայնքում մասամբ զբաղվում են նաև անասնապահությամբ, բանջարաբուստանային կուլտուրաների և կարտոֆիլի մշակմամբ: Համայնքն ունի առաջնահերթ լուծում պահանջող հետևյալ հիմնախնդիրները՝

1. Չնայած համայնքի տարածքում հանքարդյունաբերության զարգացման մեծ ծավալներին և տնտեսական շահութաբերությանը, դրա զարգացումը կարող է հանգեցնել էկոլոգիական լուրջ խնդիրների՝ հողային ծածկույթի խախտման, պոչամբարների ընդլայնման, թափոնների կուտակումների և ջրային ռեսուրսների աղտոտման:

2. Համայնքում բացակայում է գյուղատնտեսական շուկան, և դրա բացակայությունը բացասաբար է անդրադառնում պտղաբուծությամբ զբաղվողների արտադրանքի սպառման վրա:

3. Չկան համայնքի բնակավայրերը կենտրոնին և միմյանց կապող միկրոավտոբուսային երթուղիներ, և այս հանգամանքը սոցիալ-տնտեսական լուրջ դժվարություններ է առաջացնում բնակիչների շրջանում: Մեղրի քաղաքի շատ բնակիչներ ունեն սեփականության կամ վարձակալության իրավունք գյուղերի մեծաքանակ հողամասերի նկատմամբ: Սակայն տրանսպորտային երթուղիների բացակայությունը և տեղաշարժման դժվարությունները հնարավորություն չեն տալիս դրանց օգտագործումը:

4. Համայնքում մարզադահլիճի բացակայությունը խոչընդոտում է մարզական կյանքի լիարժեք զարգացմանը:

5. Միջբնակավայրային և ներբնակավայրային ճանապարհները մեծ մասամբ գտնվում են անբարեկարգ վիճակում:

«Թաթսթոուն» ՍՊԸ-ի իրական սեփականատերերի մասին

Համաձայն ՀՀ արդարադատության նախարարության աշխատակազմի իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալության¹ «Թաթսթոուն» ՍՊԸ-ն գրանցվել է 2003 թ-ի հուլիսի 1-ին: Հայտարարագրում Ընկերությունը բացահայտել է երեք իրական սեփականատերերի, որոնցից երկուսը միասին տնօրինում են Ընկերության բաժնեմասի 98%-ը:

Առաջին իրական սեփականատերը ՀՀ քաղաքացի Արամ Սաֆարյանն է՝ 50% բաժնեմասով, որը նա ձեռք է բերել 2018 թ-ի հուլիսի 26-ին: Ընկերությունում նա ունի ուղղակի մասնակցություն, նաև բաժնետերերի ընդհանուր ժողովի անդամ է:

Երկրորդ իրական սեփականատերն Ավստրիայի քաղաքացի Միխայիլ Մոգիլեվսկին է՝ 48% բաժնեմասով, որը նա նույնպես ձեռք է բերել 2018 թ-ին՝ Սաֆարյանից 5 ամիս անց՝ դեկտեմբերի 28-ին:

Երրորդ իրական սեփականատերը ՀՀ քաղաքացի Լևոն Պողոսյանն է, ընկերության գործադիր մարմնի ղեկավարը: Պողոսյանի բաժնեմասի վերաբերյալ տվյալներ հայտարարագրում չկան:

Հայաստանյան և կիպրոսյան ընկերությունների շղթան

Հայտարարագրում միջանկյալ ընկերությունների շղթան պատվում է միայն երկրորդ իրական սեփականատեր՝ Միխայիլ Մոգիլեվսկիի շուրջ: Մոգիլեվսկիի համար որպես միջանկյալ ընկերություններ գործում են երկու հայաստանյան և երկու կիպրոսյան ընկերություններ՝ Հայաստանում գտնվող «Ռեդ Մեթալ» ՓԲԸ-ն և «Լինեն Մայնինգ» ՍՊԸ-ն, Կիպրոսում գտնվող «ՄԻ. ԱՅ. ԱՅ. ՔԼԵՅ ԻՆՎԵՍՏՄԵՆՏ ԻՆՎԵՍՏՄԵՆՏ ԼԻՄԻՏԵԴ» ՍՊԸ-ն և «ԱՎԱՆԴԵՐ ՀՈԼԴԻՆԳ ԼԻՄԻՏԵԴ» ՍՊԸ-ն: Կիպրոսյան ընկերություններում Մոգիլեվսկին գործադիր մարմնի ղեկավար է²:

«Թաթսթոուն» ՍՊԸ-ի կողմից ներկայացված ՀՀ Սյունիքի մարզի Լիճքի պղնձի հանքավայրի արդյունահանման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն» փորձաքննական եզրակացության մասին

ԲՓ 96 21.12.2015թ. փորձաքննական եզրակացության պահանջներն են՝

1. Մինչ գործունեության իրականացումն անհրաժեշտ է ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ստանալ համապատասխան համաձայնությունները և թույլտվությունները՝ ներառյալ հողերի գործառնական նշանակության փոփոխության վերաբերյալ ՀՀ կառավարության որոշումը:

¹ <https://www.e-register.am/am/companies/1267410>

² <https://www.e-register.am/am/companies/1279196>

2. Ծառահատումներն իրականացնել ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով, անհրաժեշտ է կազմել և շահագրգիռ մարմինների հետ համաձայնեցնել անտառի վերականգնմանն ու փոխհատուցմանն ուղղված միջոցառումների ծրագիրը:
3. Քանի որ, համաձայն ներկայացված ՇՄԱԳ հաշվետվության, բացահանքում տեխնոլոգիական պրոցեսների իրականացման համար ջուր նախատեսվում է վերցնել Մեղրի գետի վտակ Այրիջուր գետից, անհրաժեշտ է մինչ գործունեության իրականացումը ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ստանալ ջրօգտագործման թույլտվություն:

2. «Թաթսթոուն» ՍՊԸ – ի ստանձնած պարտավորություններն ըստ 11.02.2013թ. N Պ-459 ընդերքօգտագործման պայմանագրի

2.1. Սոցիալական պարտավորություններ

Ըստ 11.02.2013թ.ՊՎ N-459 ընդերքօգտագործման պայմանագրի՝ Ընկերությունը համայնքի նկատմամբ՝ ստանձնել է հետևյալ սոցիալ-տնտեսական պարտավորությունները՝

- ա) Համայնքի զարգացման սոցիալ-տնտեսական ծրագրերին մասնակցություն ցուցաբերել տարեկան 440.0 հազար դրամի չափով:
- բ) Մանկապարտեզների և դպրոցների աշխատանքներին ցուցաբերել՝ ֆինանսական մասնակցություն տարեկան 375.0 հազար դրամի չափով:
- գ) Դպրոցի համար անհրաժեշտ գրենական պիտույքների համար տրամադրել՝ տարեկան 250.0 հազար դրամի չափով գումար:
- դ) Ստեղծել Ընկերության աշխատակիցների տարբեր սոցիալական խնդիրների լուծմանն ուղղված ֆոնդեր՝ ըստ անհրաժեշտության 850 հազար դրամի չափով:
- ե) Սոցիալապես անապահով ընտանիքներին ցուցաբերել դեղորայքային օգնություն՝ տարեկան 215 հազար դրամի չափով:
- զ) Սոցիալապես անապահով ընտանիքի 1 ուսանողի ուսման վարձի համար տարեկան տրամադրել 750.0 հազար դրամի չափով օժանդակություն:

2.1.1 11.02.2013թ. ՊՎ N-459 ընդերքօգտագործման պայմանագրով համայնքի նկատմամբ ստանձնած սոցիալական պարտավորությունների փաստացի կատարողականը

2016թ.

Ընկերությունը սոցիալ-տնտեսական զարգացման հետ կապված պարտավորություններից 2016թ. ոչինչ չի արել: Նույն թվականին Ընկերությունը Լիճքի գյուղական համայնքին կատարել է 400000 դրամական արժեքով բանոդ և մթաբետու անասունի հատկացում ու երեխաներին տրամադրել 157640 դրամական արժեքով քաղցրավենիք:

2017թ.

Մեղրիի համայնքի/Լիճք արտաբյուջետային հաշվին է փոխանցել 2030000,0 դրամ գումար: Ընկերության կողմից Լիճքին բարեգործական հատկացումներ չեն կատարվել:

2018թ.

Մեղրիի համայնքի արտաբյուջետային հաշվին փոխանցել է 11030000 դրամ, ըստ ամենայնի, կատարելով նաև նախորդ տարիների պարտավորությունները:

Բարեգործական հատկացումներ չի կատարել:

2.2. Բնապահպանական պարտավորություններ

Ընդերքօգտագործման պայմանագրով Ընկերությունը պարտավորվել է՝

1. Ապահովել ընդերքի, մթնոլորտի, հողի, անտառների, ջրերի, ինչպես նաև շինությունների և այլ կառույցների պահպանությունն ընդերքօգտագործման հետ կապված աշխատանքների վնասակար ազդեցությունից:
2. Ապահովել բնության, պատմամշակութային հուշարձանների պահպանությունն ընդերքօգտագործման հետ կապված աշխատանքների վնասակար ազդեցությունից:
3. Նախագծի և օգտակար հանածոյի արդյունահանման պայմանագրի համաձայն՝ վերականգնել և բարելավել ընդերքօգտագործման հետևանքով խախտված հողամասերը, ինչպես նաև դրանք պիտանի դարձնել տնտեսության մեջ օգտագործելու համար:
4. Ապահովել շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական եզրակացությամբ նախատեսված պայմանները:
5. Ապահովել օգտակար հանածոյի արդյունահանված տարածքի, արդյունահանման ընթացքում առաջացած արտադրական լցակույտերի տեղադիրքի և դրանց հարակից համայնքների բնակչության անվտանգության և առողջության ապահովման նպատակով մշտադիտարկումների համար նախատեսված վճարի վճարումը:

2.2.1 Բնապահպանական պարտավորությունների փաստացի կատարողականը

- Չնայած նրան, Ընկերության ընդերքօգտագործման պայմանագրում նշված է, որ ընդերքօգտագործողը պարտավոր է նախագծի և օգտակար հանածոյի արդյունահանման պայմանագրի համաձայն վերականգնել և բարելավել ընդերքօգտագործման հետևանքով խախտված հողամասերը (ռեկուլտիվացիա), ինչպես նաև դրանք պիտանի դարձնել տնտեսության մեջ օգտագործման համար կամ բերել անվտանգ վիճակի, Ընկերությունը չի կատարել պայմանագրի այդ պահանջը:



Նկար 5. Լիճքի հանքի տարածք

- 2015 թ-ին ստացված փորձաքննական եզրակացության մեջ հստակ գրված է, որ մինչև գործունեության իրականացումն անհրաժեշտ է ստանալ ջրօգտագործման թույլտվություն: Ըստ էության, Ընկերությունը մինչև 2018 թվի մայիսը գործունեություն է իրականացրել առանց ջրօգտագործման թույլտվության՝

խախտելով ԲՓ 96 21.12.2015թ փորձաքննական եզրակացության փորձաքննական պահանջը:

- Չի ապահովել պատմամշակութային հուշարձանների պահպանությունն ընդերքօգտագործման հետ կապված աշխատանքների վնասակար ազդեցությունից: Մասնավորապես չի ապահովվել հանքի տարածքում առկա եկեղեցու պահպանությանն ուղղված միջոցառումները:
- Վճարել է մշտադիտարկումների համար նախատեսված վճարները:
- Ըստ Լիճք բնակավայրի վարչական ներկայացուցչի՝ հատկացված տարածքում, համաձայն իր Ծրագրի, Ընկերությունը տնկել է 2000 վայրի և պտղատու ծառ:

2.3 Հանքի փակում, ֆինանսական երաշխիքներ

Հանքի փակման ծրագրով նախատեսված պարտավորություններ

1. Ընդերքօգտագործողի կողմից օգտակար հանածոյի արդյունահանման նպատակով հանքի փակման ծրագրով նախատեսված հանքի փակումից հետո աշխատուժի մեղմացման միջոցառումները (վերաորակավորման դասընթացների կազմակերպում, այլ մասնագիտությունների ուսուցման կազմակերպում, խթաններ և հնարավորություններ ստեղծել այդ աշխատողներին այլ ճյուղերում աշխատանքի տեղավորելու համար և այլն):

1.2 Փակվող հանքի անմիջական ազդեցության գոտում գտնվող համայնքների սոցիալ-տնտեսական մեղմացման միջոցառումները (համայնքի սոցիալ-տնտեսական ծրագրերին մասնակցություն, փոքր և միջին բիզնեսի կազմակերպման աջակցություն և այլն):

1.3 Հանքավայրի շահագործման աշխատանքների ավարտից 2 տարի առաջ կազմել հանքի վերջնական ծրագիրը և ներկայացնել լիազոր մարմին:

Հանքի փակման աշխատանքներ

ը/կ	Միջոցառումների անվանումը	Ժամկետը	Ներդրումների չափը /հազ.դրամ/
1.	Խախտած տարածքների վերականգնում	64 օր	3750.0
2.	Արտադրական հրապարակի ապամոնտաժում, տեղափոխում	15 օր	450.0
3	Բացահանքի տարածքի մոնիթորինգ	5 տարի	375.0
4	Նախագգուշացնող արգելափակող միջոցների տեղադրում	30 օր	150.0
5	Աշխատուժի սոցիալական մեղմացման աշխատանքներ		

3. Հայաստանի ԱՃԹՆ-ի կայքում³ հրապարակված «Թաթսթուն» ՍՊԸ-ի ընդհանուր ֆինանսական հաշվետվությունում ներկայացված տվյալները

Տվյալ	2016 թ.	2017 թ.	2018թ.
-------	---------	---------	--------

³ <https://reports.eiti.am/hy/report/search/company-pdf/?>

Պղնձի հանքաքար և խտահանքեր (Ընկերություն)	0	0	0
Շահութահարկ, դրամ (Ընկերություն)	0	Հաշվարկված՝ 2026577 Վճարված՝ 0	Հաշվարկված՝ 0 Վճարված՝ 3647838
Եկամտային հարկ, դրամ (Ընկերություն)	Հաշվարկված՝ 1715926 Վճարված՝ 1005800	Հաշվարկված՝ 13872456 Վճարված՝ 13534542	Հաշվարկված, 15220104 Վճարված՝ 15220104
Ավելացված արժեքի հարկ, դրամ (Ընկերության)	Հաշվարկված՝ 5859551 Վճարված՝ 0	Հաշվարկված, 29014453 Վճարված՝ 29250000	Հաշվարկված՝ 10931791՝ Վճարված՝ 16573205
Ակցիզային հարկ, դրամ (Ընկերության)	Հաշվարկված՝ 0 Վճարված՝ 0	Հաշվարկված՝ 0 Վճարված՝ 0	Հաշվարկված՝ 0 Վճարված՝ 0
Ռոյալթի, դրամ (Ընկերություն)	Հաշվարկված՝ 0 Վճարված՝ 0	Հաշվարկված՝ 0 Վճարված՝ 0	Հաշվարկված՝ 0 Վճարված՝ 0
Բնօգտագործման վճար, դրամ (Ընկերություն)	Հաշվարկված՝ 0 Վճարված՝ 0	Հաշվարկված՝ 0 Վճարված՝ 0	Հաշվարկված՝ 0 Վճարված՝ 0
Բնապահպանական վճարներ, դրամ (Ընկերություն)	Հաշվարկված՝ 0 Վճարված՝ 0	Հաշվարկված՝ 0 Վճարված՝ 0	Հաշվարկված՝ 1430254,0 դրամ, Վճարված միասնական հաշվից՝ 2110954,0 դրամ
Բնապահպանական վճարներ (մաքսային), դրամ (Ընկերություն)	Հաշվարկված՝ 0 Վճարված՝ 0	Հաշվարկված՝ 0 Վճարված՝ 0	Հաշվարկված՝ 0 Վճարված՝ 0
ՇԱԹ-29/458 պետտուրք, դրամ	Հաշվարկված՝ 10000000 Վճարված՝ 10000000	Հաշվարկված, 10000000 Վճարված՝ 0	Հաշվարկված՝ 10000000 Վճարված՝ 10000000
ՇԱԹ-29/459 պետտուրք, դրամ	Հաշվարկված՝ 10000000 Վճարված՝ 10000000	Հաշվարկված, 10000000 Վճարված՝ 0	Հաշվարկված՝ 10000000 Վճարված՝ 10000000
ՇՄՊ դրամագլուխ, դրամ (ՇԱԹ -29/458)	Բազային 3448533 դրամ, հաշվետու տարվա համար հաշվարկված՝ 122135, Վճարված՝ 1005825	Բազային 3448533 դրամ, հաշվետու տարվա համար հաշվարկված՝ 122135, վճարված՝ 0	Բազային՝ 3448533 դրամ, հաշվետու տարվա համար հաշվարկված՝ 122135, վճարված՝ 122135
ՇՄՊ դրամագլուխ, դրամ (ՇԱԹ -29/459)	Բազային 2382200 դրամ, Հաշվետու տարվա համար հաշվարկված՝	Բազային 2382200 դրամ, Հաշվետու տարվա համար	Բազային 2382200 դրամ, Հաշվետու տարվա համար

	119110 Վճարված՝ 833770	հաշվարկված՝ 119110 Վճարված՝ 0	հաշվարկված՝ 119110 Վճարված՝ 149000
Մշտադիտարկումների իրականացման վճար, դրամ (ՇԱԹ -29/458)	Բազային 2500000 դրամ, 2016թ-ի համար հաշվարկված՝ 88542 Վճարված՝ 88542	Բազային՝ 2500000: Հաշվետու տարվա համար հաշվարկված 88541 Վճարված՝ 0	Բազային՝ 2500000 Հաշվետու տարվա համար հաշվարկված 88451 Վճարված՝ 89000
Մշտադիտարկումների իրականացման վճար, դրամ (ՇԱԹ -29/459)	Բազային 2500000 դրամ, 2016թ-ի համար հաշվարկված՝ 125000 Վճարված՝ 125000	Բազային 2500000 դրամ, 2017թ-ի համար հաշվարկված՝ 125000 Վճարված՝ 0	Բազային՝ 2500000 Հաշվետու տարվա համար հաշվարկված՝ 125000 Վճարված՝ 125000
ՇՄԱԳ փորձաքննության անցկացման վճար ՇԱԹ -29/458 ՇԱԹ -29/459	0 0	0 0	ՇԱԹ-29/458 Վճարված՝ 0 ՇԱԹ-29/459 Ենթակայանի և օդային գծի շինարարության նախագիծ Վճարված՝ 400000
Գույքահարկ	Հաշվարկված՝ 0 Վճարված՝ 0	Հաշվարկված՝ 0 Վճարված՝ 0	Հաշվարկված՝ 0 Վճարված՝ 0
Հողի հարկ (Լիճք/Մեղրի համայնք), դրամ	Հաշվարկված՝ 56000 Վճարված՝ 0	Հաշվարկված՝ 224000 Վճարված՝ 0	Հաշվարկված՝ 224000 Վճարված՝ 150000՝ Մեղրիի համայնք
Վարձակալու թյուն (Հողամաս), դրամ	Վճարված՝ 0	Մեղրիի/Լիճք համայնքապետար անին է վճարել 12132477 դրամ վարձավճար	Վճարված՝ 18852172 դր. Մեղրիի/Լիճք համայնքին
Վարձակալություն (Անշարժ գույք)	Հաշվարկված՝ 0 Վճարված՝ 0	Հաշվարկված՝ 0 Վճարված՝ 0	Հաշվարկված՝ 0 Վճարված՝ 0
Վարձակալություն (փոխադրամիջոց)	Հաշվարկված՝ 0 Վճարված՝ 0	Հաշվարկված՝ 0 Վճարված՝ 0	Հաշվարկված՝ 0 Վճարված՝ 0
Տույժ, դրամ (Ընկերություն)	0	0	Հաշվարկված և վճարված տույժ 348263,0 դրամ՝ բնապահպանական հարկի ուշ վճարման համար և

			8809,0 դրամ՝ ԱԱՀ-ի ուշ վճարման համար
Տուգանք, դրամ (Ընկերություն)	0	0	Հաշվարկված և վճարված տուգանք 1484563 դրամ՝ բնապահպանական հարկի հաշվետվության ուշ ներկայացման համար
Սոց.-տնտ. պարտավորություն (ՇԱԹ -29/458)	Հաշվարկված՝ 0 Վճարված՝ 0	3000000 դրամ /Լիճք համայնքի արտաբյուջետային հաշվին/ խոշորացումից հետո համայնքի անվանումը Մեղրի	12000000 դրամ /Մեղրի համայնքի արտաբյուջետային հաշվին/
Սոց.-տնտ. պարտավորություն (ՇԱԹ -29/459)	Հաշվարկված՝ 0 Վճարված՝ 0	2030000 դրամ /Լիճք համայնքի արտաբյուջետային հաշվին/ խոշորացումից հետո համայնքի անվանումը Մեղրի	11030000 դրամ /Մեղրի համայնքի արտաբյուջետային հաշվին/
Բարեգործական հատկացումներ (ՇԱԹ-29/458)	Զի կատարել	Երախաների համար քաղցրավենիք (արժեքը 842590) /Մեղրի համայնք/	0
Բարեգործական հատկացումներ (ՇԱԹ-29/459)	Բանոդ և մթարետու անասուն (արժեքը 400000) /Լիճքի գյուղական համայնք/խոշորացումից հետո համայնքի անվանումը Մեղրի/ Քաղցրավենիք երեխաների համար(արժեքը 157640) /Լիճքի գյուղական	0	0

	համայնք/խոշորացումից հետո համայնքի անվանումը Մեղրի/		
Նվիրատվություններ	0	0	Մեղրի-Ագարակ հիմնադրամին վճարել է 100 000 դրամ որպես օգնություն մանկական ճամբարի համար
Աշխատատեղեր, մարդ (Ընկերություն)	11	11	11
Անհատույց օտարումներ	0	0	0

4. Ընկերության և պետական մարմինների ներկայացրած ԱՃԹՆ հաշվետվությունների համեմատական վերլուծություն 2016, 2017, 2018 թթ. համար

- 2017թ. Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության (ՏԿԵՆ) և Ընկերության հաշվետվությունների մեջ կան տարբերություններ: Մասնավորապես, ըստ Ընկերության, այդ թվականին Մեղրի համայնքին հողի հարկի համար չի վճարել, մինչդեռ, ըստ ՏԿԵՆ-ի հաշվետվության, կատարել է 385,0 հազար դրամի վճարում: Որպես հողամասի վարձակալության համար վարձավճար Ընկերության հաշվետվության մեջ նշված է 12132477 թիվը, իսկ ՏԿԵՆ-ի հաշվետվության մեջ՝ 13698844⁴:
- 2018թ. Ընկերության և ՏԿԵՆ-ի հաշվետվությունների մեջ նույնպես կան տարբերություններ: Մասնավորապես, Ընկերության, այդ թվականին Մեղրի համայնքին վճարել է 150,0 հազար դրամ հողի հարկ, իսկ ըստ ՏԿԵՆ-ի՝ 300,0 հազար դրամ:
- Ընկերության և Շրջակա միջավայրի նախարարության (ՇՄՆ) 2018թ. հաշվետվությունների մեջ նույնպես առկա են անհամապատասխանություններ: Ընկերության 2018 թվականի հաշվետվության մեջ որպես շրջակա միջավայրի պահպանության դրամագլխի համալրման տարեկան չափը ՇԱԹ-29/459 պայմանագրի դեպքում նշվում է 119110,0 դրամը, իսկ ՇՄՆ-ի հաշվետվությունում՝ 124990,0 դրամ⁵, վճարված գումարների թվերի մեջ տարբերություններ չկան:
- 2016թ. Ընկերության հաշվետվության և Պետական եկամուտների կոմիտեի (ՊԵԿ) հաշվետվության միջև չկան էական տարբերություններ:
- 2017թ. Ընկերության հաշվետվության և ՊԵԿ հաշվետվության⁶ միջև կան էական տարբերություններ: Մասնավորապես, ըստ Ընկերության հաշվետվության, ՇԹ պետական 10,0 միլիոն դրամ տուրքը չի մուծվել, ըստ ՊԵԿ-ի՝ մուծվել է: Նույն տարում, ըստ ՊԵԿ-ի, Ընկերությունը տուգանվել է 1375 դրամով, մինչդեռ այդ տվյալը բացակայում է Ընկերության 2017թ. հաշվետվության մեջ:
- 2018թ. Ընկերության և ՊԵԿ-ի հաշվետվության մեջ կան տարբերություններ: Ըստ Ընկերության հաշվետվության՝ 2018թ. վճարվել է 15220104,0 դրամ եկամտահարկ, ըստ ՊԵԿ-ի՝ 13986363,0

4 <https://reports.eiti.am/hy/report/search/state-body-pdf/?year=2017&state-body=2>

5 <https://reports.eiti.am/hy/report/search/state-body-pdf/?year=2018&state-body=1>

6 <https://reports.eiti.am/hy/report/search/state-body-pdf/?year=2017&state-body=3>

դրամ: Նույն տարվա Ընկերության հաշվետվության մեջ նշվում է ավելացված արժեքի հարկի՝ 16573205 դրամի վճարում, ըստ ՊԵԿ-ի՝ 16997072 դրամի վճարում: Նույն թվականի Ընկերության հաշվետվության մեջ նշված է, որ այդ տարում բնապահպանական և բնօգտագործման միասնական հաշվեհամարին կատարել է 2110954,0 դրամ վճարում, ըստ ՊԵԿ-ի հաշվետվության՝ 3945780,0 դրամի⁷:

6. Բնապահպանական վճարների նպատակային օգտագործման, մասհանումների և ծրագրերի վերաբերյալ

Հայաստանի ԱՃԹՆ պաշտոնական կայքում հրապարակված «Թաթսթոուն» ՍՊԸ-ի հաշվետվության համաձայն՝ Ընկերությունը 2016-2017 թվականներին բնապահպանական վճար չի վճարել պետական բյուջե, իսկ 2018թ. հաշվարկել է 1430254,0 դրամ և միասնական հաշվից վճարել 2110954,0 դրամ գումար:

Մինչ 2020թ-ը «Թաթսթոուն» ՍՊԸ-ն ներառված չէր «Ընկերությունների կողմից վճարվող բնապահպանական վճարների նպատակային օգտագործման մասին» օրենքում, ինչի հետևանքով Ընկերության բնապահպանական վճարներից Մեղրի համայնքը չի կարողացել օգտվել բնապահպանական և առողջապահական ծրագրերի իրականացման համար: 2020թ-ի մայիսի 27-ին ՀՀ Ազգային ժողովն ընդունեց «Ընկերությունների կողմից վճարվող բնապահպանական հարկի նպատակային օգտագործման մասին» օրենքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքը⁸, ըստ որի այնտեղ ընդգրկվեցին բոլոր մետաղական հանքավայրեր շահագործող ընկերությունները, այդ թվում նաև «Թաթսթոուն» ՍՊԸ-ն:

7. Համայնքային զարգացման ծրագրերում «Թաթսթոուն» ՍՊԸ-ի ներգրավվածության մասին

Մեղրի համայնքի 2017-2021 թվականների զարգացման հնգամյա ծրագրում⁹ ներառված մի շարք ուղղություններից նշվում է համայնքին տնտեսական բարեկեցություն բերող, բնապահպանական նվազ ազդեցությամբ և արդյունավետ կառավարվող հանքարդյունաբերություն (պղինձ, մոլիբդեն, ոսկի, գրանոդիորիտ) ունենալու տեսլականը: Չնայած դրան, ծրագրում լուրջ մտահոգություններ կան տարածաշրջանում հանքարդյունաբերության ոլորտի կողմից համայնքի տարածքների աղտոտվածության նկատմամբ: Նշվում է, որ չնայած տնտեսական շահութաբերությանը, հանքարդյունաբերության զարգացումը կարող է հանգեցնել էկոլոգիական լուրջ խնդիրների՝ հողային ծածկույթի խախտման, պոչամբարների ընդլայնման, թափոնների կուտակումների և ջրային ռեսուրսների աղտոտման: Հատկանշանական է, սակայն, որ համայնքի հիմնական արդյունաբերական ձեռնարկությունների շարքում «Թաթսթոուն» ՍՊԸ-ն ընդհանրապես չի հիշատակվում: Աշխատատեղերի ստեղծման և մասնավոր ներդրումների հետ կապված ծրագրերից հիշատակված են «Լիչքվազ» ՓԲԸ-ն (ՀՀ Սյունիքի մարզի Մեղրի համայնքի Լիճքվազ-Թեյի ոսկու հանքավայրի շահագործում ստորգետնյա եղանակով ծրագիրը՝ 11.000.000 ԱՄՆ դոլար ներդրում և 176 նոր աշխատատեղի ստեղծում,

⁷ <https://reports.eiti.am/hy/report/search/state-body-pdf/?year=2018&state-body=3>

⁸ <https://www.arlis.am/>

⁹ <http://syunik.mtad.am/hzargatsmantsragrer>

ինչպես նաև Վարդանիձոր գյուղում Մեղրի մանկապարտեզի մասնաշենքերի հիմնում՝ 37.000.000 ՀՀ դրամ ներդրում) և «Ղարագույաններ» ՓԲԸ-ն (ՀՀ Սյունիքի մարզի Մեղրի համայնքի Վերին Վարդանիձորի ոսկի-բազմամետաղային հանքավայրի շահագործում ստորգետնյա եղանակով Ծրագրի իրականացում՝ 4078.7 հազ. ԱՄՆ դոլար ներդրում և 184 նոր աշխատատեղի ստեղծում):

8. Ընկերության՝ շրջակա միջավայրի պահպանության դրամագլխի համալրման համար գումարների ներդրման, բնապահպանական և բնօգտագործման հարկերի, պարտադիր այլ վճարների մարման բնութագիրը¹⁰

Ըստ Ընկերության ներկայացրած հաշվետվության՝ 2016-2017թթ. արդյունահանում չի իրականացրել Լիճքի հանքավայրից իրեն տրված շահագործման թույլտվության սահմաններում:

2016 թվականին՝

Շրջակա միջավայրի պահպանության դրամագլխին հատկացման հաշվարկված գումարի մեծությունը հաշվետու տարվա համար կազմել է 124990,0 դրամ, որից վճարել է 833770,0 դրամ/ հաշվարկման բազային չափը Լիճքի հանքավայրի համար կազմում է 2382200,0 դրամ/:

Մշտադիտարկումների իրականացման համար վճարվել է է 125000,0 դրամ, բազային չափը սահմանված է 2500000 դրամ/:

Ռոյալթի չի վճարել: Բնապահպանական և բնօգտագործման վճարներ չի հաշվարկել և չի վճարել:

Ազնիվ, գունավոր, սև և հազվագյուտ մետաղների յուրաքանչյուր հանքավայրի օգտագործման (շահագործման) թույլտվության տրամադրման համար սահմանված 10,0 միլիոն դրամ պետական տուրքը վճարել է:

Չի վճարել հողի, փոխադրամիջոցների համար սահմանված հարկերը և տուրքերը, չի վճարել հողամասի վարձակալության դիմաց:

2017թվականին՝

Դրամագլխին հատկացման հաշվարկված գումարի մեծությունը հաշվետու տարվա համար կազմել է 119110,0 դրամ, ինչը չի վճարել (նախորդ տարվա գերավճարի հաշվին):

Մշտադիտարկումների իրականացման վճարը կազմել է 125000,0 դրամ, ինչը չի վճարել:

Ռոյալթին չի վճարել:

Բնապահպանական և բնօգտագործման վճարներ չի հաշվարկել և չի վճարել:

Ազնիվ, գունավոր, սև և հազվագյուտ մետաղների յուրաքանչյուր հանքավայրի օգտագործման (շահագործման) թույլտվության տրամադրման համար սահմանված 10,0 միլիոն դրամ պետական տուրքը չի վճարել:

¹⁰ <https://reports.eiti.am/hy/report/search/company-pdf/?year=2017&company=17>

Չի վճարել հողի, փոխադրամիջոցների համար սահմանված հարկերը և տուրքերը, չի վճարել հողամասի վարձակալության դիմաց:

Որպես հողամասի վարձակալության համար Մեղրիի/Լիճք համայնքապետարանին է վճարել 12132477 դրամ վարձավճար:

2018 թվականին՝

Ընկերության ԱՃԹՆ հաշվետվության մեջ իր կողմից վճարված բնապահպանական հարկերը ներկայացված են ամբողջ ՄՊԸ-ի համար, այլ ոչ թե ըստ հանքավայրերի, համաձայն որի 2018 թվականի համար հաշվարկվել է 1430254,0 դրամ և միասնական հաշվից վճարել է 2110954,0 դրամ:

Շրջակա միջավայրի պահպանության դրամագլխի համար հաշվարկվել է 119110 դրամ և այն համալրվել է 149000 դրամով:

Մշտադիտարկումների համար վճարի բազային 2500000 դրամից 2018թ-ի համար հաշվարկվել է 119110 դրամ և վճարվել է 125000 դրամ:

Չի վճարել հողի, փոխադրամիջոցների համար սահմանված հարկերը և տուրքերը:

Հողամասի վարձակալության դիմաց Մեղրիի համայնքին է փոխանցել 18852172 դրամ:

Ընկերությունը 2018

թ.

հարկի և 8809,0 դրամով՝ ԱԱՀ-ի ուշ վճարման համար:

9. Այցելությունների արդյունքում հարցումների վերլուծություն

ԷկոԼուրը 2021 թվականի հունվարի 7-11-ը ՀՀ Սյունիքի մարզի Մեղրի համայնքի վարչական տարածքում ընդերքօգտագործման իրավունք տիրապետող, սակայն փաստացի գործունեություն չիրականացնող կամ մասնակի իրականացնող 5 ընդերքօգտագործող կազմակերպությունների ազդակիր բնակավայրեր այցելության ընդացքում ընդհանուր առմամբ հանդիպել և հարցազրույցներ է անցկացրել տարածաշրջանի 25 բնակչի (8 կին և 17 տղամարդ), այդ թվում նաև բնակավայրերի վարչական ներկայացուցիչների և Մեղրի խոշորացված համայնքի ներկայացուցիչի հետ: Այցի ընթացքում ստացած տեղեկատվությունը հիմնականում ներառվել են Ծրագրի շրջանակներում կազմված՝ առանձին կազմակերպությունների վերաբերյալ հաշվետվություններում:

Լիճքի պղնձի հանքավայրին ազդակիր Լիճք բնակավայրի, ինչպես նաև Մեղրի խոշորացված համայնքի բնակչության շրջանում սոցիալական, շրջակա միջավայրի և առողջապահության հարցերի վերաբերյալ անցկացված հարցազրույցների նպատակն էր պարզել ԱՃԹՆ-ի ոլորտում բնակչության իրազեկվածության մակարդակը, նրանց գնահատականները և կարիքները, ինչպես նաև նրանց դիրքորոշումը հանքավայրի հետագա շահագործման հարցերում, լսել նրանց առաջարկներն առկա բնապահպանական խնդիրների լուծման վերաբերյալ: Այդ տեղեկատվության հիմնական մասը տեղ է գտել

սույն հաշվետվության նախորդ բաժիններում, իսկ մյուս մասի արդյունքների վերլուծությունը ներկայացվում է ստորև՝

Ըստ Լիճք բնակավայրի վարչական ներկայացուցչի /Հովհաննես Միրզոյան/՝

1. Գյուղը մահանում է: Հողատերերն իրենց հողերը 1 քմ –ը 800 դրամով վաճառել են հանք շահագործող ընկերությանը: Գյուղատնտեսությունն ինքնաբավ է, արտադրված գյուղմթերքն իրացվում է ընտանիքի ներսում: Գուցե եթե հանքավայրը նորմալ աշխատեր, բնակիչները կարող էին աշխատել, եկամուտ կունենային, կմնային գյուղում: Հանքի շահագործման դադարեցումից հետո տեղի է ունեցել աշխատուժի կրճատում: Մինչև 50 հոգի կրճատվել են շրջանի մակարդակով, նախկին աշխատակիցները տեղափոխվել են Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ: Մինչև համայնքի խոշորացումը «Թաթսթոուն» ՍՊԸ-ն լուրջ աջակցություն էր ցուցաբերում բնակավայրին՝ փողոցների լուսավորության ապահովման, երեխաներին և տարեցներին դրամական օգնության ցուցաբերման առումով: Բնակավայրը կարիք ունի քաղաքացիական պաշտպանության ապաստարանների, առկա նկուղները բոլորովին օգտագործելի չեն:



Նկար 6. Լիճք բնակավայրի վարչական ներկայացուցիչ Հովհաննես Միրզոյան

2. «Թաթսթոուն» ՍՊԸ-ն նախագծի և օգտակար հանածոյի արդյունահանման պայմանագրի համաձայն չի վերականգնել և բարելավել ընդերքօգտագործման հետևանքով խախտված հողամասերը (ռեկուլտիվացիա), ինչպես նաև դրանք պիտանի չի դարձնել տնտեսության մեջ օգտագործման համար կամ չի բերել անվտանգ վիճակի, քանի որ կազմակերպության տեխնիկան դեռևս հանքավայրի տարածքում է, որ տեխնիկայի դուրս բերումից հետո կկատարվեն այդ աշխատանքները:
3. Համայնքի կողմից հատկացված տարածքում ընկերությունը, համաձայն իր Ծրագրի, տնկել է 2000 վայրի և պտղատու ծառ:
4. Ներկայումս «Թաթսթոուն» ՍՊԸ-ն ցանկացած քննարկում ուղղակիորեն անցկացնում է Մեղրի համայնքի հետ, բնակավայրի հետ չի հաղորդակցվում, շփումները բացակայում են:
5. Քանի որ հանքում կատարվել են միայն մակաբացման աշխատանքներ և Լիճքի հանքավայրը չի շահագործվել, նրա թողած բացասական ազդեցությունները չեն

զգացվել, եթե հանքավայրը շահագործվեր, անշուշտ, կթողներ բացասական հետևանքներ խմելու ջրի որակի վրա, ներկա պատերազմական իրավիճակում հանքավայրի բացասական հետևանքների մասին մտահոգությունները ստորադասվել են նոր՝ ավելի գլոբալ մարտահրավերներին:

- Որպես համայնքի սոցիալ-տնտեսական ոլորտում առկա խնդիրներ հարցման մասնակից գյուղական բնակավայրերի բնակիչները նշում են աշխատատեղերի բացակայությունը, միջհամայնքային և ներհամայնքային տրանսպորտային հաղորդակցության բացակայությունը, ստացված գյուղատնտեսական ապրանքների իրացման հետ կապված դժվարությունները:
- Հարցվածների մի մասը կոդմ է Լիճքի հանքավայրի շահագործմանը, քանի որ աղքատությանից և սոցիալական ծանր վիճակից դուրս գալու միակ ճանապարհը համարում է դա, սակայն նրանք գտնում են, որ հանքավայրը շահագործող «Թաթսթոուն» ՍՊԸ-ն աշխատանքները վերսկսելու պարագայում պարտադիր պետք է ապահովի սահմանված էկոլոգիական նորմերի և պահանջների կատարումը:
- Շրջակա միջավայրի աղտոտման և իրենց առողջության վրա ունեցած ազդեցություն կապը հարցվածները չեն կարողանում միանշանակ գնահատել, քանի որ, ըստ իրենց, չեն տիրապետում ստույգ վիճակագրական և հետազոտական տվյալների: Բոլոր դեպքերում նրանց անհանգստացնում է շրջակա միջավայրի աղտոտվածությունը: Այդ մասին նշվում է նաև ազդակիր Մեղրի համայնքի զարգացման հնգամյա ծրագրում:
- Ըստ համայնքապետարանի և բնակավայրի վարչական ղեկավարների, իրենք չեն մասնակցել «Թաթսթոուն» ՍՊԸ-ի՝ Լիճքի հանքավայրի ընդերքօգտագործման պայմանագրի կնքման գործընթացներին:
- Առողջական խնդիրներ ունենալու ժամանակ Լիճքի բնակիչներն օգտվում են Մեղրիի բուժսպասարկման ծառայություններից, քանի որ գյուղը չունի բուժսպասարկման կետ, իսկ կցված բուժքույրն աշխատում է համատեղությամբ: Ավելի լուրջ առողջական խնդիրների դեպքում օգտվում են մարզային և Երևանի առողջապահական կենտրոնների ծառայություններից:
- ԷկոԼուրի հետ հանդիպման ժամանակ խոշորացված Մեղրիի համայնքապետարանի Մեղրի համայնքի կազմակերպական բաժնի պետը /Վանիկ Սարգսյան/ նշեց, որ հայ-ադրբեջանական պատերազմը համայնքում առաջացել է հրատապ լուծման ենթակա նոր՝ քաղաքացիական պաշտպանության թաքստոցների և ապաստարանների կառուցման, միջպետական ավտոճանապարհների որակի և անվտանգության ապահովման, Արցախից տեղահանվածների, զոհվածների ընտանիքների սոցիալական խնդիրներ:
- Ըստ հարցվածների հայ-ադրբեջանական սահմանագատման գոտում հանքավայրեր և նրանց ենթակառուցվածքներ չկան:
- Հարցումներից պարզ դարձավ, որ ընդհանրապես բացակայում է բնակավայրերի տարածքում գործունեություն իրականացնող ընդերքօգտագործողների, այդ թվում նաև «Թաթսթոուն» ՍՊԸ-ի համագործակցությունն ազդակիր բնակավայրերի հետ, այդ ընկերությունները նույնիսկ ոչ մասնագիտական աշխատանքներում չեն ներգրավում բնակավայրերի բնակիչներին:

ԱՌԱՋԱՐԿՆԵՐ

Շրջակա միջավայրի աղտոտման կանխարգելման համար բնակիչներն առաջարկում են՝

1. Պարբերաբար կատարել տարածքի ռադիոակտիվ մակարդակի չափագրումներ:
2. Ապահովել գյուղմթերքի կենսաքիմիական ստուգումներ:
3. Կիրառել հանքաքարի փոշով արտավայրերի աղտոտման կանխարգելման միջոցառումներ:
4. Իրականացնել հանքավայրերից բնակչության խմելու ջրի աղբյուրների աղտոտման կանխարգելման միջոցառումներ:
5. Գյուղական բնակավայրերում հիմնել օրինական աղբավայրեր, բնակավայրերում տեղադրել աղբամաններ, կազմակերպել պարբերական աղբահանություն:
6. Ուժեղացնել ազդակիր բնակավայրերի տարածքներում գործունեություն իրականացնող ընդերքօգտագործող ընկերությունների իրատեսական հաշվետվողականության և համագործակցության մեխանիզմները:
7. Հանքավայրը շահագործել բացառապես շրջակա միջավայրի աղտոտման կանխարգելման և բնական ռեսուրսների ողջամիտ օգտագործման ապահովման համար սահմանված նորմատիվների և չափաքանակներին համապատասխան:
8. Քանի որ գործնականում հանրային լուսմներին ներկայացված բնապահպանական միջոցառումներից որևէ մեկը փաստացի չի կատարվում, հանքարդյունահանման ծրագրերի հաստատման գործընթացում ներկայացնել շրջակա միջավայրի աղտոտման կանխարգելմանն ուղղված գործուն և կատարման համար իրատեսական բնապահպանական ծրագրեր:

Բնակավայրերի սոցիալ-տնտեսական վիճակի համար բնակիչներն առաջարկում են՝

- Ընդերքօգտագործման պայմանագրերի կնքման ժամանակ պայմանագրի մաս հանդիսացող՝ համայնքի սոցիալ-տնտեսական զարգացմանն ուղղված պարտավորությունների ձևավորման գործընթացին **պարտադիր** մասնակից դարձնել համայնքապետարանների ղեկավարներին և ազդակիր բնակավայրերի վարչական ներկայացուցիչներին, այդ բաղադրիչում ներառել նրանց պահանջներն ու իրական կարիքները:
- Ընկերությունների կողմից համայնքի զարգացման սոցիալ-տնտեսական ծրագրերին մասնակցության համար նախատեսված գումարներն ուղղել միջբնակավայրային ճանապարհների վերանորոգման աշխատանքների իրականացմանը:
- Ապահովել բավարար միջհամայնքային տրանսպորտային հաղորդակցություն:
- Որպես բնակավայրերի զարգացման հեռանկարներ դիտարկել զբոսաշրջությունը, պահածոների և չոր մրգերի փոքր արտադրամասերի կազմակերպումը, փոքր գյուղատնտեսության և էկոտուրիզմի զարգացումը:
- Բնակավայրերում սկսել քաղաքացիական պաշտպանության կառույցների՝ թաքստոցների, ապաստարանների, նկուղների կառուցման/վերակառուցման աշխատանքները, վարչական շենքերը, դպրոցները համալրել նոր և պիտանի

անհատական պաշտպանության պարագաներով, ապահովել միջպետական ավտոճանապարհների որակն ու անվտանգությունը, զոհվածների ընտանիքներին ցուցաբերել սոցիալական աջակցություն:

10. Եզրակացություն

1. Ընդհանրապես Ընկերության կողմից ներկայացված հաշվետվությունը հակասում է Ընդերքի մասին ՀՀ օրենսգրքի 9-րդ հոդվածի 4-րդ մասի պահանջներին, համաձայն որի, սահմանված տեղեկատվությունն ընդերքօգտագործողը ներկայացնում է իր կողմից շահագործվող յուրաքանչյուր հանքավայրի մասին առանձին: Մինչդեռ ինչպես Ընկերության, այնպես էլ ՀՀ շրջակա միջավայրի նախարարության հաշվետվությունները¹¹ տեղադրված են «Թաթսթոուն» ՍՊԸ-ի ամբողջ գործունեության վերաբերյալ: Ընկերությունն իր ԱՃԹՆ հաշվետվությունը ներկայացրել է միասնական Լիճքի և Այգեձորի հանքավայրերի համար մեկ հաշվետվությամբ,¹² ինչը Ընդերքի մասին ՀՀ օրենսգրքի 9-րդ հոդվածի 3-րդ մասի և ՀՀ կառավարության 2018թ. հունիսի 8-ի N 666-Ն որոշմամբ հաստատված կարգի խախտում կամ թերություն է, քանի որ նրանք ունեն ինչպես տարբեր ընդերքօգտագործման թույլտվություններ, այնպես էլ տարբեր ազդակիր բնակավայրեր, և տրամաբանական է, որ այդ հանքավայրերի բացասական ազդեցությունը կրում են տարբեր բնակավայրեր՝ տարբեր չափով:
2. Շահագործման թույլտվություն ստանալուց ի վեր Ընկերությունն արդյունահանման աշխատանքներ մինչ օրս չի իրականացրել /չի ապահովվել Ընդերքի մասին ՀՀ օրենսգրքով սահմանվող ընդերքի ողջամիտ և համալիր օգտագործումը, Օրենսգրքի 4-րդ հոդվածի 1-ին 6-րդ մաս /:
3. Չի ապահովվել օգտակար հանածոյի արդյունահանման նախագծի պահանջների կատարումը:
4. Չի ապահովվել ընդերքօգտագործման պայմանագրային պարտավորությունների կատարումը:
5. Ազդակիր բնակավայրերի բնակիչներն իրազեկված չեն սոցիալական ծախսերի մասով ընկերությունների ստանձնած պարտավորությունների մասին: Ընդերքօգտագործող ընկերությունն իր օգտագործած շարժական մեքենաների համար սահմանվող գույքահարկը չի վճարել ազդակիր համայնքում, չնայած նրան, որ դրանց թողած բնապահպանական և առողջապահական բացասական հետևանքները կրում է տեղի բնակչությունը:
6. Ընկերությունը մինչև 2019թ. կատարել է որոշակի լեռնակապիտալ աշխատանքներ և տեղափոխել մակաբացման ապարները, այնուամենայնիվ, մինչև 2018 թվականը չի վճարել բնապահպանական վճարներ, որոնք, համաձայն ՀՀ օրենսդրության, պետք է բաշխվեին ազդակիր համայնքների միջև՝ նրանց կողմից ներկայացվող բնապահպանական և սոցիալական և առողջապահական ծրագրերի իրականացման նպատակով (միայն 2018թ. է 2 հանքավայրի համար հաշվարկել

¹¹ <https://reports.eiti.am/hy/>

1430254,0 դրամ և 2110954 դրամ վճարել բնապահպանական և բնօգտագործման միասնական հաշվին):

7. Հանքարդյունահանման ծրագրերում որպես ազդակիր բնակչությանը շահագրգռող գործոն օգտագործված՝ զգալի աշխատատեղերի բացման հեռանկարը չի արդարացվել:
8. Չնայած նրան, որ Ընկերության ընդերքօգտագործման պայմանագրում նշված է, որ ընդերքօգտագործողը պարտավոր է նախագծի և օգտակար հանածոյի արդյունահանման պայմանագրի համաձայն վերականգնել և բարելավել ընդերքօգտագործման հետևանքով խախտված հողամասերը (ռեկուլտիվացիա), ինչպես նաև դրանք պիտանի դարձնել տնտեսության մեջ օգտագործման համար կամ բերել անվտանգ վիճակի, Ընկերությունը չի կատարել պայմանագրի այդ պահանջը:
9. 2016թ. Մեղրի խոշորացված համայնքի ձևավորումից հետո անմիջական ազդակիր բնակավայրերը զրկվել են ընդերքօգտագործման պայմանագրով Ընկերության ստանձնած սոցիալական աջակցությունից ուղղակիորեն օգտվելու հնարավորությունից:
10. ԱՃԹՆ համակարգն ունի պետական մարմինների և ընդերքօգտագործողների հաշվետվությունների հավաստիության և համադրելիության խնդիր:

Սույն հաշվետվությունը ստեղծվել է Ամերիկայի ժողովրդի աջակցությամբ՝ ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության միջոցով: Այստեղ արտահայտված տեսակետները /կամ նյութի բովանդակությունը/ միմիայն հեղինակներինն են և պարտադիր չէ, որ արտահայտեն ԱՄՆ ՄԶԳ կամ ԱՄՆ կառավարության տեսակետները: